

Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան այսօր պիտի մեկնի ժրնե մասնակցելու համար Առևտուրի Համաշխարհային Կապմակերպության Կեդրոնական Խորհուրդի նիստին, որ նուիրում է Հայաստանի կապմակերպության անդամակցության: Մարգարեանի գլխաորած պատուիրակության մաս կը կազմեն Հայաստանի առևտուրի եւ տնտեսական վարչացման, էլեմուտքի ու տնտեսության նախարարները, Չուիցերիոյ մէջ Հայաստանի դեսպանը եւ բարձրաստիճան այլ պաշտօնատարներ:

### ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՁ «ՔԱՅԻՏԱ»Ի ՄԱՐՁՈՒՄՆԵՐՈՒ ԿԵԳՐՈՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ ՇԱՐՈՆԻ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՀԵԹԵԹ ԵՆ

Կ'ԸՍԷ ՁՕՐ. ԼԱՀՈՒՏ

Նախագահ զօր. Էմիլ Լահուտ անցնել շաբաթավերջին Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի ամբաստանութիւնները, թէ՛ Լիբանանի մէջ կը գտնուին «Քայիտա»ի մարզումի կեդրոնները, Համարեց անհեթեթ եւ Լիբանանի նկատմամբ թշնամութեան դրսևորում:

«Իսրայէլեան նման ամբաստանութիւններ չեն կրնար խաբել ոեւէ մէկը, որովհետեւ Լիբանանի վայելած ապահովական կայունութիւնը եւ Պէյրութի կեցուածքները տարբեր երկիրներ վստահեցուցին, որ «Քայիտա»ի որեւէ կեդրոն գոյութիւն չունի Լիբանանի մէջ, ինչպէս նաեւ գոյութիւն չունի «Քայիտա»ի ցանցին եւ ազգային դիմադրութեան միջեւ որեւէ կապ», ըսաւ նախագահ Լահուտ եւ աւելցուց, որ Շարոն կը փորձէ շահագործել շրջանա-

յին պայթուցիկ կացութիւնը: Նախագահ Լահուտ շեշտեց, որ Հարաւոր Լիբանանի բռնազրաւուած հողերը ազատագրող Լիբանան կարող է դիմադրելու իսրայէլեան զրպարտութիւնները՝ ազգային ամբապնդուած միասնականութեամբ եւ օտար երկիրներու Պէյրութի հանդէպ վստահութեամբ:

Իր կարգին, Հրզպայա հերբեց, թէ Լիբանանի մէջ գոյութիւն ունին «Քայիտա»ի կեդրոններ կամ յարաբերութիւններ գոյութիւն ունին նշեալ ցանցին հետ:

Հրզպայայի հրապարակած պաշտօնական հաղորդագրութեան մէջ, ընդգծուեցաւ Շարոնի թշնամական նպատակները Լիբանանի նկատմամբ՝ շեշտելով, թէ նման ամբաստանութիւններ կը գործեն դիմադրութիւն:

### «ՔԱԳԻՆ»Ի ԳՈՅՈՒԹԻՒՆԸ ԲԱԽՏՈՐՈՇ ԵՂԱԾ Ե ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՈՒ ՄԱՍՆԱԴՐԱՊԵՍ ԱՐԵԻՄՏԱՀԱՅ ԵՒ ՍՓԻՒՌԻ ԸՎԱՏՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

ԷՁ 4

ԿԻՊՐՈՍԻ ՏԱԳԱՊ

### ՏԵՆԲԹԱՇ ԼԱԲԱՏԵՍ ԶԷ

Թուրք կիպրացի դեկավար Ռաուֆ Տենքթաշ շաբաթավերջին յայտնած է, թէ մեծ յոյս չունի, թէ Կիպրոսի տագնապին վերաբերեալ համաձայնութիւն մը պիտի գոյանայ Հինգշաբթի օրու Եւրոպական Միութեան վեհաժողովին առաջ, սակայն ան պատրաստակամութիւն յայտնած է ՄԱԿի խաղաղարար ծրագիրին շուրջ բանակցելու:

Դիւանագետներ կը յայտնեն, որ մետաստերորդ վայրկեանի դիւանագիտութեան իբրեւ արդիւնք, յոյն եւ թուրք կիպրացիները կրնան փոխանցման համաձայնութիւն մը գոյացնել Քոփենհակընի վեհաժողովին առաջ, սակայն Տենքթաշ ըսած է որ լաւատես չէ, կարդայէ ետք ՄԱԿի առաջարկներուն նկատմամբ յոյն կիպրացիներուն պատասխանը:

Միւս կողմէ, Յունաստանի արտաքին գործոց նախարար Ճորձ Փափանտրէու հրատարակուած հարցապրոյցի մը մէջ ըսած է, թէ Ե. Միութեան մէջ յուրջ տագնապ պիտի ստեղծուի, եթէ Քոփենհակընի վեհաժողովին Կիպրոսի անդամակցութիւնը չիաստատուի:

Աթէնք կ'ըսէ, որ եթէ Կիպրոսի անդամակցութիւնը ուշանայ, Յունաստան կրնայ իր վերջին իրաւունքը օգտագործել՝ խափանելու համար անդամակցութիւնը՝ 9 այլ թեկնածուներու, որոնք Միութիւն պիտի ընդունուին Հինգշաբթի օր:

Իսկ Պոլսոյ մէջ տեսակցութիւն մը ունենալէ ետք Տենքթաշի հետ, Թուրքիոյ վարչապետ Ապտիլլա Կիլ ըսած է, որ Ե. Միութիւնը կրնայ Կիպրոսի տագնապին լուծումի մը ամբաստանութիւնը թուական մը ճշդելով անդամակցութեան բանակցութեանց սկսման համար: (ՈՌՅԹԸՐԶ)

ԵԱԳԿԻ ԺՈՂՈՎԻՆ ՊԱՔՈՒՆ ԽԻՍՏ ՈՃՈՎ ԲՆՆԱԳԱՏԵԼՈՎ՝ ԼԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆԵԱՆ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԸ

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ՉԻ ԿՐՆԱՐ ՄԱՍ ԿԱԶՄԵԼ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ

Դեկտեմբեր 6ին, Փորթուգալի Փորթո քաղաքին մէջ ԵԱԿԿԻ արտաքին գործոց նախարարներու 10րդ նստաշրջանը սկսաւ իր աշխատանքներուն: Հանդիպումին գլխաոր նիւթն էր ահաբեկչութեան դէմ պայքարը. սակայն քննարկուեցան նաեւ հարաւ - արեւելեան Եւրոպայի, Կեդրոնական Ասիոյ, Հարաւային Կովկասի եւ այլ շրջաններու վերաբերող հարցեր: Ժողովին մասնակցելու համար Դեկտեմբեր 5ին Փորթո մեկնած էր Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի գլխաորած պատուիրակութիւնը:

Նախարար Օսկանեան ժողովին ընթացքին իր խօսքին մէջ, անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի տագնապին, քննադատեց Արաբիան՝ իր տագնապին լուծման առաջարկները մերժելուն համար: «Արաբիան գաղտնիացուցիչ ձեւով եւ երախտամտութեամբ կը մերժէ միջազգային որեւէ կապմակերպութեան կողմէ ներկայացուող բոլոր նախաձեռնութիւնները, եթէ անոնք չեն համապատասխաներ իր ծաւալապաշտական մօտեցումներուն», շեշտեց նախարար Օսկանեան: Ան դիտել տուաւ, որ ԵԱԿԿԻ Միւսքի խմբակի համանախագահները, որոնք ձկուներին կը ցուցաբերեն Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման գործընթացին մէջ, ոչ մէկ օգնութիւն կը ստանան Արաբիանէն:

Նախարարը նաեւ ընդգծեց, որ մինչ Արաբիան յարձակողապաշտ եւ ոսպմատենչ յայտարարութիւններ կ'ընէ, կը մերժէ բանակցութիւն-

ներու ճամբով դժուարութեամբ ձեռք բերուած համաձայնութիւնները եւ կը շարունակէ Հայաստանը ենթարկել տնտեսական շրջափակման՝ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին աջակցելուն համար, Երեւան կը շարունակէ հաստատօրէն պահպանել ԵԱԿԿԻ հիմնական արժէքները:

«Այսօրուան աշխարհին մէջ նոր երկիրներ կը ստեղծուին Ասիոյ մէջ, նոր սահմաններ կը գծուին եւ կը վերագծուին Եւրոպայի մէջ եւ բաժնուած երկիրներ կը վերամիասնան տարբեր ձեւերով: Այս նոր աշխարհին մէջ, Լեռնային Ղարաբաղը, որ երբեք չէ պատկանած Արաբիային ոչ խորհրդային տարիներուն, եւ որ չի վերահսկուիր Արաբիանի կողմէ այսօր, չի կրնար Արաբիանի մէկ մասը ըլլալ ապագային», յայտարարեց նախարար Օսկանեան:

Նախարար Օսկանեան Փորթոյի մէջ ունեցաւ նաեւ շարք մը երկկողմանի հանդիպումներ:

● ԵԻՐՈՊԱԿԱՆ ՅԱՆՃԱՏՈՂՈՎԻ արտաքին յարաբերութիւններու ընդհանուր քարտուղարի տեղակալ Ֆերնանտօ Վալենտին Մարտին, ելոյթ ունենալով ԵԱԿԿԻ արտաքին գործոց նախարարներու հանդիպումին, յայտարարած է, թէ «Լեռնային Ղարաբաղի տագնապին եւ Վրաստանի մէջ անկողմ հակամարտութիւններուն պատճառած անկայունութիւնը Հարաւային Կովկասի մէջ կը սպառնայ շրջանային անվերականգնութեան, կը խանգարէ վարչացման եւ բարենպաստ պայմաններ կը ստեղծէ կապմակերպուած ոճիրներու համար»:

### ԻՐԱՔ ՅԱՐԳԵՅ ՄԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԸ ԵՒ 12 ՀԱԶԱՐ ԷՁԵՐԷ ԲԱՂԿԱՅԱԾ ԹՂԹԱԾՐԱՐ ՄԸ ՈՒՂԱՐԿԵՑ ՎԻԵՆՆԱ ԵՒ ՆԻԻ ԵՈՐՔ



Իրաքի պաշտօնատարներ թղթածրարէն էջեր պարունակող պայուսակը կը կնքեն

12 հազար էջերէ կազմուած թղթածրար մը իրաքի իշխանութիւններուն կողմէ ուղարկուեցաւ Վիեննա եւ Նիւ

Եորք, որպէսզի ուսումնասիրուի մասնագէտներու կողմէ:

Մասնաւոր օղանաւ մը թղթածրարը Պաղատատէն

Նախ Կիպրոս հասցուց, ուր թղթածրարը բաժնուեցաւ երկուքի: Մէկ

Շարք՝ էջ 3

### 1988Ի ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՂԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՂՈՒՄ

7 Դեկտեմբեր 1988ի աղէտալի երկրաշարժին զոհերուն յիշատակը ոգեկոչելու համար Շաբաթ 7 Դեկտեմբերին Շիրակի մարզ եւ Գիւմրիի քաղաք այցելեց Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան: Նախագահին ընկերակցեցան Հայաստանի քաղաքաշինութեան նախարար Դաւիթ Լոբեան եւ այլ պաշտօնատարներ: Աւանդութեան համաձայն, ժամը 11:41ին, երբ պատահած էր երկրաշարժը, նախագահ Քոչարեան Շիրակի գերեզմանատան մէջ ծաղկեպսակ գետեղեց Աղէտի Գօտիին յիշատակը յաւերճացնող խաչքարին վրայ: Ներկաները մէկ վայրկեան լուռութեամբ յարգեցին զոհուած 16 հազար զինուորացիներուն յիշատակը: Նոյն օրը, Գիւմրիի կեդրոնական հրապարակին վրայ տեղի ունեցաւ երկրաշարժի զոհերուն յիշատակը յաւերճացնող «Մօր եւ մանկան» յուշարձանին բացումը (ճարտարապետ՝ Զաւէն Կոչոյեան):

### ՏԱՍՆՀԻՆԳ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Դեկտեմբեր 6ի երեկոյեան ժամը 18:00ին (Հայաստանի ժամանակացոյցով) աւարտեցաւ 19 Փետրուար 2003ին կայանալիք Հայաստանի նախագահական ընտրութիւններուն թեկնածուներ առաջադրելու ժամկետը: Արձանագրուած են 15 թեկնածուներ՝ որոնցմէ երեքը՝ քաղաքացիական նախաձեռնութեամբ՝ նախագահ Ռոպէրթ Քոչարեան, «Հեռանկար» ռազմավարական կեդրոնի տնօրէն Արամ Կարապետեան եւ Ռազմավարական եւ Ազգային Հեռագոտութիւններու Հայկական կեդրոնի-ղեկավար, նախկին արտաքին գործոց նախարար Բաֆֆի Յովհաննիսեան:

Մնացեալ 12 թեկնածուները առաջադրուած են իրենց կուսակցութիւններուն կողմէ: Հայաստանի ժողովրդական կուսակցութիւնը առաջադրած է կուսակցութեան ղեկավար Ստեփան Դեմիրճեանի, Ազգային Միաբանութիւն կուսակցութիւնը՝ Արտաշէս Գեղամեանի, Ազգային Ինքնորոշման Միաւորումը՝ Պարոյր Հայրիկեանի, Հայաստանի Համայնավար կուսակցութիւնը՝ Վլատիմիր Դարբինեանի, Հայաստանի Դեմոկրատական կուսակցութիւնը Արամ Սարգսեանի, Միաւորուած Հայերը՝ Ռուբէն Աւագեանի, Ժողովրդավարական Հայրենիքը՝ Պետրոս Մակեանի, Հանրապետութիւն կուսակցութիւնը՝ Արամ Սարգսեանի, Ազգային ժողովրդավարական Միութիւնը՝ Վազգէն Մանուկեանի, Հայրենիք եւ Պատի կուսակցութիւնը՝ Գագիկ Մարգարեանի, Ազգային Համաձայնութիւնը՝ Արամ Յարութեան, Արեւիկեանի, Ազգային ժողովրդավարական Դաշինքը՝ Ար-

Շարք՝ էջ 10

### ԵՐՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԲՈՓԵՆՀԱԿԸՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ՊԻՏԻ ՎԵՐԱԴԱՍԱԴՐԵ ԵՐՐՈՊԱՅԻ ԲԱՐՏԵՍԸ

Եւրոպայի քարտէշը այս շաբաթ վերջնականապէս պիտի փոխուի, երբ մեծամասնութեամբ արեւելեան եւրոպական երկիրներ համաձայնութիւններ ձեռք ձգեն Քոփենհակընի յառաջիկայ Հինգշաբթի օրու վեհաժողովին՝ անդամակցելու համար եւրոպական Միութեան:

Եւրոպայի համար ճակատագրական այս շաբաթուան ընթացքին կրնայ մտնել սկզբունքային համաձայնութիւն մը գոյացնելու վերջ տալու համար Կիպրոսի բաժանումին, ՕԹԱՆԵԿ կանգն յոյս կրնայ տրուիլ՝ Միութեան պաշտպանութեան մարզի նախաձեռնութեան համար եւ Թուրքիոյ առժամայ թուական մը տրուիլ՝ անդամակցութեան բանակցութեանց սկսելու նպատակով:

Հակառակ դրամական հարցերու շուրջ մետաստերորդ վայրկեանի բանակցութեան, 15 անդամ հաշուող Ե. Միութեան, 2004ին դէպի միացում համայնավար Արե-

ւելեան Եւրոպա ընդարձակման համաձայնութիւնը գրեթէ վստահաբար պիտի գոյանայ Դեկտեմբեր 12ին սկսելիք վեհաժողովին՝ ընդլայնելով բարգաւաճման գօտին եւ դարձնելով Պաղ Պատերազմի օրերու բաժանումը:

Սակայն Կիպրոսի եւ Թուրքիոյ հարցերուն պատասխանները շատ աւելի անորոշ են եւ անոնց առանցքը գլխաւորաբար Անգարայի մը անփորձ կառավարութիւնն է: Դիւանագետներ «մրցումի մը» ձեռնարկած են՝ իրականացնելու համար դեպքերու շղթայ մը, որ Թուրքիա պէտք է վաւերացնէ աւելի ժողովրդավարական բարեկարգումներ, ճամբան հարթ է Ե. Միութիւն - ՕԹԱՆ պաշտպանութեան համաձայնութեան, գորցարդ կը խափանէ եւ համոզել թուրք կիպրացիները, որ ընդունին Կիպրոսի մասին ՄԱԿի խաղաղարար ծրագիրին շուրջ բանակցիլ՝ փոխարէնը ապահովելով դէպի Ե. Միութիւն յստակ ուղի մը:

Թուրքիոյ վարչապետ Ապտիլլա Կիլ Շաբաթ օր յոյս յայտնած է, որ Ե. Միութիւնը Քոփենհակընի մէջ «ճիշդ որոշումը» պիտի կայացնէ: Ան շեշտած է. «Յստակ թուական մը բազմաթիւ հարցեր պիտի լուծուին»:

### ԹՈՒՐԵԱ Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՏԵՂ ՉՈՒՆԻ

Գերմանիոյ պահպանողականները, որոնք ընտրաշախի ձեռնարկած են յառաջիկայ տարուան շրջանային ընտրութիւններուն պարտութեան մատնելու համար վարչապետ Կերհարտ Շրեօտըրը, երկթիւ տուած են Թուրքիոյ Ե. Միութեան անդամակցութեան իրենց ընդդիմութեան՝ յայտնելով, որ Թուրքիա չափազանց աղքատ եւ չափազանց տարբեր է անդամակցելու համար:

Շարք՝ էջ 10

### ՄԱՍՆԱԿՅԷ ԼԵՄԻ e-mail ԲՐՇԱԿԻՆ

ԷՁ 3



### ՄԱՍՆԱԿՅԷՒ ԼԵՄԻ E-MAIL ԱՐՇԱԻՆ

Վերջին քանի մը շաբաթներուն ընթացքին, Նախիջեւանի պատմական Ջուլֆա (Ջուղա) քաղաքի հայկական կոթողները կ'ենթարկուին սիսթեմաթիք բարբարոսութիւններու եւ քանդումներու՝ ոչնչացնելու համար այդ շրջանին մէջ հայկական պատմական ներկայութեան վկաները:

Այս բոլորին դիմաց, միջազգային պատկան իշխանութիւնները լուր կը մնան: Այս ուղղութեամբ, ԼԵՄԻ Կեդրոնական Վարչութիւնը կազմակերպած է բողոքի e-mail արշաւ մը, ուղղուած՝ ԵՈՒՆԵՍԿՕ-ի ընդհանուր տնօրէն Քուաչիքո Մացուրայի: Չոր բողոքի ձայնը միջազգային համայնքին լսելի դարձնելու եւ մասնակցելու համար այս e-mail արշաւին, այցելեցէք ԼԵՄԻ կայքէջը՝ www.lcmagan.com: Կրնաք նաեւ հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝ 01-243383 կամ 03-802774:

Mr. Koichiro Matsuura  
Director General of UNESCO

Dear Sir,

It is with great horror that we are continuously receiving the news of the systematic destructions of Armenian medieval Khatchkars in the historic town of Djulfa in Nakhitchevan.

We cannot accept that the crime against the Armenian cultural heritages continue, while the international community and especially UNESCO remain silent.

As you have successfully prevented the destruction of Armenian monuments in Azerbaïdjan in the near past, we ask you to strongly intervene in order to stop these barbarous acts.

Respectfully Yours,

### Հ. Յ. Գ. ՉՈՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՐ

## ՇԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՐԳԻ ՇԱՄԵՐԳ

Կազմակերպուած է Հ. Յ. Գ. Չոսի-Եան Ուսանողական Միութեան, Կիրակի 8 Դեկտեմբեր երեկոյեան ժամը 7:00ին «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ տեղի ունեցաւ հեղինակային երգի երեկոյ մը՝ մեկնաբանութեամբ հայրենի երգիչներ՝ Էդուարդ Չորիկեանի եւ Լիլիթ Պիպոյեանի:

Է. Չորիկեան հեղինակն է աւելի քան 200 երգերու եւ քանաստեղծութիւններու, ինչպէս նաեւ առաջին հայկական ռոք-օփ-

րային, որ 1997ին բեմադրուած է Համազգայինի թատրոնին կողմէ:

Լիլիթ Պիպոյեան կը պատկանի հայ ժամանակակից երաժշտութեան այն շրջանակին, որ աւանդական, դասական եւ ազգագրական ժանրերէն ստեղծեց բոլորին լազոյն յատկանիշները համախմբող նոր ժանր մը:

Մօտ երկու ժամ տեւած երգահանդէսին, հայրենի երկու երաժիշտները իրենց հեղինակային երգերու շարքով հմայեցին

ներկայից՝ ներկայացնելով հայկական ժամանակակից երգարուեստի լազոյն երաժշտական կտորներով:

Կարգ մը երգերու պարագային, Է. Չորիկեանի եւ Լ. Պիպոյեանի ընկերակցեցան նաեւ սրնգահար Թամար Իսկէնեան եւ դաշնակահար Նարեկ Տեմիրճեան:

Նշենք, որ ձեռնարկին ամբողջ հասոյթը պիտի յատկացուի Լոռի Մարտի Սինոն Չաւարեանի անուան վարժարանին:

### Վ. ԹԵՔԷԵԱՆ ՎԱՐՇԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 50ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

«Յովհաննէս Պողոսեան» հանդիսարարին մէջ երկ երեկոյեան տեղի ունեցաւ Վահան Թէքէեան վարժարանի հիմնադրութեան 50ամեակին նշումը: Վարժարանի տնօրէնուհի Ապտուհի Գալստիսեան անդրադարձաւ վերջին տարիներուն վարժարանի ունեցած յաջողութիւններուն եւ կրթական առաքելութեան:

Հանդիսութեան հովանաւոր կրթութեան նախարար Ապտէլ Ռահիմ Մըրատ վերադառնալով Վահան Թէքէեան վարժարանի դերը իր անձնական կրթական կեանքին մէջ եւ այս առիթով «Ուսուցչի մետալ»ով պարգևատրեց վարժարանի 1954 - 1986 տարիներու տնօրէն Երուսանդ Պապայեանը: Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան եւ հայ կաթողիկէ պատրիարքութեան ընդհանուր փոխանորդ Վարդան-Եպս. Աշգարեան, կարդացին Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսի, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթ-

ղիկոսի եւ հայ կաթողիկէ Ներսէս - Պետրոս ԺԹ. պատրիարքի օրհնութեան գիրքերը: Գեղամ Եպս. Խաչերեան՝ յանուն Արամ Ա. կաթողիկոսի, «Մետրոպ Մաշտոց» շքանշանով պարգևատրեց Երուսանդ Պապայեանը: Վերջինս շնորհակալական խօսքով մը իր երախտագիտութիւնը յայտնեց այս պարգևատրման համար:

Այնուհետեւ տեղի ունեցաւ վարժարանի թիկունք կանգնած պատասխանատուներու եւ 25 տարիէն աւելի կրթական ծառայութեան մէջ գտնուած ուսուցիչներու պարգևատրումը:



Վ. Պապայեան եւ առաջնորդ սրբազան հայրը

### ԵՐԳՉՈՒՅԻ ԼԵՆԱ ՔԻՒՐԵՃԵԱՆԻ ԵՐԳԱՅԱՆԴԵՍ

Հայ Աւետարանական քրիստոնէական տօնակատարութիւններու ծիրին ներս, Շաբաթ, 7 Դեկտեմբերի երեկոյեան ժամը 8:30ին, Պէյրութի Ամերիկեան համալսարանի «Էսէմպլի Հոյ»-ին մէջ տեղի ունեցաւ երգահանդէս մը՝ նախագահութեամբ Լիբանանի առաջին տիկին Մարտի Լահուտի: Երոյն ունեցաւ քրիստոնէական շրջանաւարտներէն՝ մեզցո-սոփրանո Լենա Քիրքճեան, դաշնակի ընկերակցութեամբ Էվա Յարութիւնեանի: Յայտագրին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ հայ աւետարանական «Արմիս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ վեր. Ներսէս Պալպանեանի:

Մեզցո-սոփրանո Լենա Քիրքճեան ներկայացուց երեք բաժինէ կազմուած յայտագիր մը՝ բաղկացած հայկական եւ միջազգային դասական գործերէ: Մատուցուեցան Ռոմանտո Մելիքեանի, Բարսեղ Կանաչեանի, Ալեքսանդր Ալեք. Յովհաննէսի, Շումանի, Պրամպի, Սեն-Սանսի եւ այլ յորինողներու գործերէն: Երգչուհիին ընկերակցող դաշնակահարուհի Էվա Յարութիւնեան առանձին ներկայացուց դաշնամուրային գործեր: Յայտագրին երրորդ մասով բեմ բարձրացաւ «Արմիս» երգչախումբը (ղեկավարութեամբ վեր. Ներսէս Պալպանեանի, դաշնակի ընկերակցութեամբ՝ Սեան Պալպանեանի), որուն ընկերակցութեամբ Լենա Քիրքճեան մատուցեց հոգեւոր բնոյթի երգեր:

### ԻՐԱՔ ՅԱՐԳԵՅ ՄԱԿԻ ...

Շարունակուած Ա. ԷջԵԳ

մասը ուղարկուեցաւ Աստրիա՝ Հիւլիական Ումանի թի Միջազգային Գործակալութեան կեդրոնատեղին, իսկ մնացեալը՝ Նի Եորք, ԱՆՄՈՎԻՔԻ գլխաւոր քննիչներուն:

Իրաք այս ձեռով յարգած կ'ըլլայ ՄԱԿԻ հաստատած պայմանագրով, որ աւարտեցաւ երկ: Իրաք մինչեւ 8 Դեկտեմբեր առիթ ունէր ՄԱԿԻ ներկայացնելու մասնաւոր ցանկագրումը իր ունեցած բոլոր վէճերուն՝ ներառեալ հարապակի քաղաքական վէճերը:

ՄԱԿԻ Ապահովութեան խորհուրդի անդամ երկիրները տարակարծիք են թրաժորարին նկատմանը իրենց կեցուածքին մէջ: Ռոսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը յայտնեց, որ պայմանագրով յարգելով՝ Իրաք ցոյց կու տայ, թէ կ'ենթարկուի ՄԱԿԻ ապահովման որոշումին: Բրիտանիա սակայն կարելիութիւն չտուաւ յանձնուած թրաժորարին՝ դիտել տալով, որ Մատամ Հիւսէյնի նախապէս կատարած յայտարարութիւնները «ստուերու թրաժորար» մը եղած են:

Միացեալ Նահանգներու նախկին նախագահ ձիւմի Քարթըր Օսլոյի մէջ ըսաւ, որ Իրաքի կեցուածքը դրական է եւ կը նպաստէ պատերազմէ մը խուսափելու կարելիութեան իրականացման: Քարթըր աւելցուց, որ եթէ Իրաք շարունակէ գործակցութիւնը ՄԱԿԻ քննիչներուն հետ, պատերազմ յայտարարելու որեւէ պատճառ պիտի չմնայ:

Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար ձեք Սթրո յայտնեց, որ ցարդ Մատամի կողմէ յանձնուած որեւէ թրաժորար կամ կատարուած որեւէ յայտարարութիւն իրականութիւնը չեն յայտնած, հետեւաբար այս անգամ ալ պէտք չէ վստահիլ յանձնուած թրաժորարին: Ան աւելցուց, որ պէտք է սպասել եւ տեսնել թէ ի՞նչ կը բովանդակէ թրաժորարը եւ որքան հաւաստիքն անոր տեղեկութիւնները:

Միացեալ Նահանգներու նախագահ ձորճ Պուշ, որ կը սպառնայ պատերազմ յայտարարել, եթէ փաստուի թէ Մատամ կը խաբէ ամբողջ աշխարհը, յայտնեց, որ Իրաքի պատրաստած թրաժորարը մանրակնիւն ուսումնասիրութեան պիտի ենթարկուի:

Մինչ այդ, ՄԱԿԻ քննիչները կը շարունակեն իրենց աշխատանքը Իրաքի մէջ, ուր հաւաքական քանդումի վէճերու գոյութեան մասին փնտոտուք կը կատարեն: ՄԱԿԻ յանձնած իր թրաժորարին մէջ Իրաք վերահաստատած է, թէ քիմիական, կենսաբանական ու կորիպային վէճեր չունի: Յարդ կատարուած քննութիւնները յիշեալ վէճերուն գոյութեան մասին ոչինչ յայտարարեցաւ են:

### ՄԱՍՏԱՍ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ԽՆԴԻՐԵ ԶՈՒՅԹՅՈՒՆԵՐԵՆ

Իրաքի նախագահ Մատամ Հիւսէյն Շաբաթ օր կատարած մէկ յայտարարութեան մէջ ներողութիւն խնդրեց քրիստոնէական ժողովուրդէն 1990-1991ի զբաւման համար: Միեւնոյն առեւ սակայն ան քննադատեց Քուէյթի իշխանութիւնները Միացեալ Նահանգներուն հետ Իրաքի դէմ դաւելու համար:

Քուէյթի հակադարձեց՝ մերժելով Մատամի ներողութեան խնդրանքը: Տեղեկատուութեան նախարար շէյխ Ահմէտ Ֆահտ Մապալ ըսաւ, որ Իրաքի ղեկավարը յուսահատ փորձ մը կը կատարէ հարցեր ստեղծելու համար: Շէյխ Ահմէտ աւելցուց, որ Մատամի յայտարարութիւնը կ'ընդգրկէ ահաբեկչական արարքներ քաջալերող ու իրաւորող խօսքեր: Ան ըսաւ նաեւ, որ Մատամի նպատակն է վիճի մը ստեղծել Քուէյթի ժողովուրդին եւ իշխանութիւններուն միջեւ:

Մ. Ա. Հ. Ա. Ե. ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԱՅՆՃԱՐ

**ՆԱԲԱԿԱՏԻՔ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԾ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

Գոհաբանական պաշտամունքը պիտի կատարուի Կիրակի, 15 Դեկտեմբեր 2002, կէսօրէ ետք ժամը 3:00ին, բարեգործութեան եկեղեցւոյ մէջ:

ՇՐԱԻՐ

Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ ԷՇՐԵՅԻԷ Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ ԷՇՐԵՅԻԷ

### Ս. ՅԱԿՈԲԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՀՈԳԵՒՈՐ, ԱՉՂԱՅԻՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՆՆԱՐԿՆԵՐ

ՈՒՐԲԱԹ. 6 Դեկտեմբեր 2002 Լուսանկարներու ցուցահանդէս Բացում՝ երեկոյեան ժամը 6:30ին. տեղողութիւն մինչեւ 10 Դեկտեմբեր առաւօտեան ժամը 10:00 -երեկոյեան ժամը 7:00: Արուեստագետ Լ. Թաշճեանի հից եւ Գործակարգներու: Հայաստան, Արցախ, Արեւմտեան Հայաստան, Կիլիկիա:

Շուգանարութեամբ՝ **ԳԵՐՉ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ՝** Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի **Նախագահութեամբ՝ ԽԱՉԻԿ ԵՒ ՄԱՐԿՕ ՊԱՊԻԿԵԱՆԻ ԴՈՒՍՏԵՐՈՒՆ**

ԵՐԵՎԱՆԻ, 10 Դեկտեմբեր 2002, աշակերտական պատարագ եւ յետ պատարագի, արտասանական մրցում, հայկական վարժարաններու միջեւ: Սկիզբ պատարագի՝ ժամը 9:30ին:

ՇԱԲԱԹ. 14 Դեկտեմբեր 2002, մատողի պատրաստութեան օր. **ժամը 3:00ին Աղի օրհնութիւն** **ժամը 3:30ին Ոչխարներու զենում** **ժամը 7:00ին Կսկում** **ժամը 6:00ին սկսեալ ամբողջ գիշերը մինչեւ առաւօտ մատողի-հարիսայի պատրաստութիւն:** **ժամը 9:00- առաւօտեան մէկը ժողովրդային տօնախմբութիւն:** Հայկական տոհմիկ պարեր Այնճարի Տաւուլ Չուռնա: Երոյն կ'ունենայ գաւառական երգերով՝ **ՇԱԲԷ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ**

ԿԻՐԱԿԻ, 15 Դեկտեմբեր, 2002 **Յաւուր պատշաճի պիտի պատարագէ եւ բարոզ՝** **ԳԵՐՉ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ** Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի **ժամը 7:30ին Սկիզբ ժամերգութեան** **ժամը 9:30ին Ս. պատարագ** **ժամը 11:00ին Զարոգ** **ժամը 12:00ին Մատողի օրհնութիւն**

Սիրով կը հրաւիրենք հայ ժողովուրդի գաւակները վերանորոգուելու օրուան խորհուրդով: **ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ** ԵԱՆՕԹ: Մատողու ոչխար կամ փոխան մատողի ճուղիատուութիւն կատարելու համար հաճեցէք հեռաձայնել **01/449926** թիւին:

**ԲԱՐԵԼԱԷ ԿԵԱՆԵՂ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՐ ԵՐԱՋՆԵՐԴ**

Ազատ ժամերուդ վաստկէ՝ 500 \$-ն 2000 \$ ամսական եկամտ, ամփոխարինելի

**ԳՈՐԾԻ ԱՌԻԹ**

ԸՆՈ. 03 / 473216:

**45 YEARS** National Panasonic Technics

**Panasonic**

**NV-DS30**

**RE-WS10** Worldspace Receiver

Digital Video Camera 2.5", 0 Lux

**Worth: \$ 180**

**FREE**

This offer is valid till January 31, 2003

only on products guaranteed by TUNJIAN CORP. S.A. 04/712129-130, 711967, 03/243203 Fax: 04/712177, E-mail: TTC@cyberia.net.lb Add 10% VAT on above prices

**IGOL MOTOR OIL**

**FUEL CARD**

**ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ **01-242556** թիւին:







# Կնոջական

## ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

### ԿԱՂԱՆԳԻ ՆՈՒԷՐԸ

Կաղանղը կը մօտենայ, եւ երեխաները արդէն իսկ անհամբեր կը սպասեն իրենց նուէրներուն: Մինչ այդ ծնողները կը գտնուին նոյն դժուարութեան առջեւ՝ ինչ նուէրով իրենց զաւակին, որ թէ՛ ուրախացնէ զինք եւ թէ՛ նպատակի մը ծառայէ:



#### ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՇԱՍ ԵՆ

Խաղալիքի խանութները, սկսելով ամէնէն պաշտօնականներով եւ հասնելով «Ուան Տայլըր»ին, մեզի կը պարզեն այլազան խաղալիքներ՝ բոլոր տարիքներուն եւ բոլոր պիւտճէներուն համապատասխանող:

Կարելի է նաեւ մտածել հագուստեղէնի, Սի.Տի.ի, գիրքի մասին, եւ ինչո՞ւ չէ՛ պահարանի մը մէջ երկու ազնիւ խօսքի հետ սահեցուած գունամարի մը մասին (առաւելաբար պատանիներուն պարագային):

#### ՃԻՇԳ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Ամէնէն աւելի յուսախար ընողը այն է, որ երեխան նուէրը բանալէն ետք չունենայ մեր սկընդկայած հակազդեցութիւնը: 4 - 5 տարեկան երեխան բառերը չի ծածկում մեր եւ ինքնաբերական կը բացայայտէ իր զգացումները. աւելի ուշ ան աւելի գիտակից եւ քաղաքավար կ'ըլլայ:

10-12 տարեկան սկսեալ պահանջները կը շատնան, անոնք կ'ուզեն նաեւ մեծերը կապել: Նուէրներու ցանկին վրայ անպակաս կ'ըլլան ռատիօ-քասէթը, համակարգիչը, եւ այլն...

**ՆՈՒԷՐԻՆ ԶԱՓԱՆՇՆԵՐԸ**  
Որեւէ նուէր գնելէ առաջ չմոռնանք, որ ամէն տարիք ունի իր հետաքրքրութիւնները, իւր

## ՃԻՇԳ ԵՒ ՍԽԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ՝ ԳԻՆԻՒՆ ՄԱՍԻՆ

Հոռոմէացիք ստեղծած են գինին: ՍխԱԼ: Ճիշդ է, որ բառին ծագումը հոռոմէական է, եւ հոռոմէացիք գինի շատ կը խմէին, բայց գինին ծագումը շատ աւելի հին է: Աստուածաշունչին մէջ բազմիցս յիշուած է «խմիչքը, որմէ նոյն հասակեալ գինով-ցաւ»... գինիի հետքեր գտնուած են շատ հին քաղաքակրթութիւններու մօտ, Քրիստոսէ աւելի քան 5000 տարի առաջ:

Գինին ծարաւը կը մարէ: ՍխԱԼ: Ընդհակառակը, ան մարմնին ջուրը կը պակասեցնէ: Գինի խմելը ետք միզելու պահանջը կ'աւելնայ եւ ծարաւի զգացումը կը շարունակուի ալքոլի պատճառով: Հետեւաբար որքան գինի խմենք, այնքան կը ծարաւանանք:

Գինին հարուստ է հանքայիններով: Ճիշդ է: Գինն առաւել յիշուած է 400 տարեք տեսակի նիւթեր, ինչպէս՝ հանքայիններ, էթանոլ, Պէ. խումբի կենսաքիմիկներ, եւ այլն:

Լաւ գինին երբեք չի վնասեր առողջութեան: Ճիշդ է ՍխԱԼ: Բացի քիմիքի իմաստէն, լաւ կամ գէշ գինիները նոյն աստիճանի ալքոլ կը պարունակեն: Հարցը չափաւորութեան մէջ է, նախընտրելի է բաժակ մը որակաւոր գինի խմել, քան շիշ մը անորակ...

Գինին լաւ է սրտի երակներուն: Ճիշդ է ՍխԱԼ: Մ. Նահանգներու մէջ կատարուած ուսումնասիրութիւններ ակացուցած են, թէ քիչ քանակութեամբ սպառած կարմիր գինին դրական ազդեցութիւն կը գործէ քոլեսթերոլին վրայ, կ'արգիլէ արեան լեղակաթնի մը երակներու խցումը:

Սրտի կաթնածծէ ետք երբեք գինի պէտք չէ խմել: ՍխԱԼ: Եթէ բժշկական բոլոր քննութիւնները գոհացուցիչ ըլլան, ոչ մէկ անպատեհութիւն կայ օրական մէկ կամ երկու բաժակ գինի խմելուն մէջ:

Գինին կը գիրցնէ: Ճիշդ է: Բաժակ մը գինին համազօր է 7 կտոր շաքարի: Արդարեւ, 1 կրամ ալքոլը 7 ջերմութ է, 1 կրամ շաքարը՝ 4 ջերմութ, իսկ 1 կրամ իւղը՝ 9 ջերմութ: Ալքոլին արտադրած ջերմութը անգործածելի է մկանային աշխատանքին մէջ, հետեւաբար անիկա ճարպի կը վերածուի:

Գինին գլխու ցաւ կը պատճառէ: Ճիշդ է: Գլխու ցաւ, ստամոքսի այրուածք, պրկում... Յատկապէս ճերմակ գինին այլազան ցաւեր կը պատճառէ:

«Թանիս» կոչուած նիւթը հարուստ է կենսաանիւթներով: Ճիշդ է: Կարմիր գինին պարունակած քանիքը հարուստ է Փէ. եւ Էօ. կենսաանիւթներով: Ոմանց կարծիքով, քանիքը նաեւ կ'ազդէ մարսողական մկանային բնաթելերուն վրայ եւ կը նպաստէ մարսողութեան:

Երեխաներուն երբեք գինի պէտք չէ տալ: Ճիշդ է: Երեխան անմիջապէս կ'ազդուի եւ կը վնասուի ալքոլին. խիստ թելադրելի է, որ անոր գինի կամ շամփանիա չառաջարկուի հաւաքովիներու առիթով: Ան հակում կ'ունենայ ալքոլը նոյնացնելու ինժեղի եւ տօնի հետ եւ հետագային դիւրաւ կը դառնայ անոր գերին:

Գինին արգիլուած չէ յղի կիններուն: ՍխԱԼ: Ալքոլը դիւրաւ կ'անցնի մօրմէն երեխային եւ չափազանցութեան պարագային, հետեւանքները շատ լուրջ կրնան ըլլալ, ինչպէս՝ վիժում, կանխահաս ծննդաբերութիւն, երեխային մտային եւ ֆիզիքական աճի դանդաղեցում...

Գինին ալքոլը կ'անցնի նաեւ մօր կաթին մէջ, ինչ որ կ'արէ կաթին համը եւ ալքոլ կը փոխանցէ նորածինին: Յղիններուն թելադրելի է օրական երկու բաժակէն աւելի գինի չխմել:

Գինի պէտք չէ խմել, երբ դեղ կը գործածենք: Ճիշդ է: Առհասարակ ալքոլ պարունակող խմիչքներն ու կարգ մը դեղեր իրարու հետ հաշտ չեն ըլլալ: Հարցը առաւելաբար կը վերաբերի հանդարտեցուցիչներուն, ցաւազրկիչներուն եւ անթիպիոթիքներուն:

Շաքարախտաւորները գինի պէտք չէ խմեն: ՍխԱԼ: Արգելք մը չկայ ինքզինքին լաւ հետեւող անձի մը, որ բաժակ մը կարմիր գինի խմէ կէսօրուան ճաշին հետ: Այսուհանդերձ բոլոր տեսակի ոգելից ըմպելիները յանձնարարելի չեն շաքարախտաւորներուն:

## ԲՈՅՍԵՐՈՒ ԽՆԱՍՔ ԵՈՒՔԱ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.- Երեքան երկար եւ հաստ ցօղունով բոյս մըն է, ունի բարակ, երկար, սրածայր վերջաւորութեամբ տերեւներ, որոնք բոյսին ծառի տեսք կու տան:

Միջին հաշուով երեք մը 1էն 2,5 մեթր բարձրութիւն կրնայ ունենալ: Երեքային թաղարը պէտք է հետեւողական ձեւով դարձնել, որպէսզի անոր ցօղունը չթեքի եւ կարելի եղածին չափ ուղիղ մնայ: ԽՆԱՍՔ.- Երեքան զօրաւոր լոյս կը սիրէ, նոյնիսկ՝ արեւին ճառագայթները: Ան միջին խոնաւութեամբ միջավայրերէ կ'ախորժի, ամբար կարելի է նոյնիսկ պատշգամ հանել, իսկ ձմեռը պէտք է պահել ոչ տաքցուած սենեակի մէջ:

Չափաւոր ջրեցեք երեքան, այն ժամանակ, երբ նկատէք, որ հողը չորացած է: Մարտէն Հոկտեմբերի միջեւ 15 օրը անգամ մը հեղուկ պարարտացուցիչ տուէք:

Տերեւներուն փոշին առէք կամ «տուշ»ի ձեւով, կամ ալ զանոնք մէկիկ-մէկիկ խոնաւ սպունգով մաքրելով:

Շուկայի վրայ կը գտնենք երեքայի զանազան տեսակներ, ինչ տեսակի ալ ըլլայ ձեւը, իմացէք, որ անոր թիւ մէկ թշնամին ջուրն է, որ կը փտեցնէ արմատները. բայց չմոռնաք նաեւ, որ ան չափազանց կ'ախորժի լոյսէն:

## ԽՈՐԱԳԻՐ ՍՈՅԱՅՈՎ ԱՂՑԱՆ



- Բաղադրութիւն 4 անձի համար.-
- Պղտիկ տուփ մը սոյայի ծիլ
  - 2 լոլիկ
  - Հազարի սիրտ մը
  - 150 կրամ խոզապուխտ
  - Ստեպլին մը
  - Կանաչ սոխ
  - 12 սեւ ձիթապտուղ
  - Պղտիկ տուփ մը պահածոյ սունկ կամ նոյն քանակութեամբ շերտուած թարմ սունկ
  - Ապուրի դգալ մը «սոյա սօս» սոյայի թացան
  - Ապուրի 2 դգալ քացախ
  - Ապուրի 4 դգալ ձէթ
  - Աղէն զգուշանալ, քանի որ «սոյա սօս»ը աղի կ'ըլլայ

Պատրաստութիւն.- Ամանի մը մէջ պարպել լուացուած եւ քամոցի մէջ փոխադրուած սոյան, կտրտուած հազարի տերեւները, մանրուած լոլիկը, քերոցէ անցած ստեպլինը, շերտուած սունկը, մանրուած կանաչ սոխը եւ խորանարդներու ձեւով կտրտուած խոզապուխտը եւ մաքրուած սեւ ձիթապտուղը:

Փոս ամանի մը մէջ լուծել «սոյա սօս»ը, քացախն ու ձէթը, պատառաքողով զարնել՝ մինչեւ միատարր դառնալը, սպա թափել բանջարեղէններուն վրայ եւ հրամցնել:

## Պատրաստեց՝ ՇՈՒՇԿ ՍԱԻՍԱԳԱԼԵԱՆ



ԱՐԱԳ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ - ՈՐԱՎԱԿՈՐ ԼՈՒՍԱԿԱՐՆԵՐ

Չոր ուրախ առիթներու լուսանկարները սպեցե նոր հասած ԱՐԿԻՎԱԿԱԿ ԴԻԴԻՏԱԿ ԴՅԵՐՈՎԻ օրակալու եւ զանազան յափերով:

Ստանձնում՝ 20 վայրկեանէ:

Լուսանկարները կ'առանազդենք CD-ի եւ կամ FLOPPY տիպիներու վրայ

Cameraներու ձուլ հաւաքածոյ:

Ապագան եւ նկարի շոգանկարներու ընտիր տեսակաճի:

Կը ստանձնենք ուրախ առիթներու photo նկարախաճումը, արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գիներով:

Պուրճ Ընձուտ. Բաղաքապետարանի փողոց.

«Սամբը Արիմ»ի դիմաց. Գեա. 01-261858 եւ 01-255992

## ԿԱՂԱՆԳԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

### ՏՕՆԱԾԱՌ



Կակա՞ն, թէ՛ արեւստական ծառ յարգարեն... - Ընտրել խոնաւ տեսակը:

Դալար, իսկական ծառի համակիրներուն տանք կարգ մը տեղեկութիւններ եւ թելադրանքներ... Որպէսզի ձեր ծառը երկար դիմանայ՝ - Սենեակին ջերմաստիճանը 20ը պէտք չէ անցնի: - Օդի փոփոխութիւններէն զայն հեռու պահել:

Գնելէ եւ տուն բերելէ ետք, նախ պարտէզը կամ պատշգամը 2-3 օր պահել, յետոյ սենեակ փոխադրել: - Շարաթը 2-3 անգամ ջրել: - Յաճախ ջուր սրսկել տերեւներուն: - Շարաթը 2 անգամ սառուցիլ կտորներ աւելցնել թաղարին երեսը եւ ձգել, որ հալի:

Թաղարի մը մէջ տնկելու պարագային, ծառին կեանքը 2-3 շաբաթով կ'երկարի: - Յաճախ ջուր սրսկել տերեւներուն: - Շարաթը 2 անգամ սառուցիլ կտորներ աւելցնել թաղարին երեսը եւ ձգել, որ հալի:

Շատեր արդէն Դեկտեմբեր 1ին յարգարենցին իրենց տօնածառը, ուրիշներ տակաւին երկմտանքի մէջ են՝ իս-

ՐԼԱՅ: - Նուսափիլ տփգոյն, փոշոտած եւ ցանցառ ծառերէն: - Ընտրել կոնաձեւ եւ ձեւաւոր ծառ մը:

**ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ**

«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ ծրարարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումիւն բնագիրը ընթերցիլ գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգակ»ի ծանուցումներու գրասենեակը:

**Հարսանեկան Քարտերու Արի Հարսաբան**


Հարսանեկան Կերպում - Գ. Համուտ  
Հեռ. 01-253008





# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

## ԱՇԽԱՐՀ



### ԵԹԷ ՄԻԱՅՆ 2000 ԸՍՈՒԻ...

Հ.Մ.Ը.Մ.ի կարգապահ համակիրները խոստենքամ վերադարձած են ֆուտբոլի դաշտերը՝ ինչպես նաև վարդիվառներու, «ուստա» և երեսներու եւ միասնորոն Հ.Մ.Ը.Մ.ի փառքի տարիները: Համակիրներու այս ձինագնդակը կը մեծայ: Վերջին մրցումին ժուռնիի դաշտին վրայ: Համակիրներու թիւը կը գնահատուէր երեք հազարով:

Անցեալին դաշտի մուտքերուն տուժար հինգ հազար իրքանանեան ոսկի էր, այսօր՝ երեք հազար:

Թուարանական պարզ հաշիւ մը. եթէ Հ.Մ.Ը.Մ.ական իրաքանչիւր համակիր իր մուտքի տուժին հետ վճարէ Հ.Մ.Ը.Մ.ին երկու հազար իրքանանեան ոսկի, իրաքանչիւր մրցումին միջինը՝ երկու հազար հինգ հարիւր համակիր, Հ.Մ.Ը.Մ.ի սնտուկը կը մտնէ հինգ միլիոն իրքանանեան ոսկի: Ամիսը չորս մրցում, ամսական մուտք կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ. քսան միլիոն լ.ո.:

Այս մուտքը ունենալով՝ մեր մարզիկներուն ծախսերը պիտի բաւարարուին հարիւր առ հարիւր: Անոնք պիտի խաղան առանց նիւթական մտահոգութեան:

Միայն 2000 իրքանանեան ոսկիով մենք պիտի ունենանք Լիբանանի ամենամեծ ֆուտբոլի խումբերէն մէկը:

Երկու հազար իրքանանեան ոսկի վճարելով՝ մենք կրնանք մեր կրտսեր խումբերէն ստանալ խոստմանալից պատանի ֆուտբոլիստներ: Դուք հասկցե՞ք քանի մը Յակոբիկներ:

Երկու հազար իրքանանեան ոսկի վճարելով՝ մենք կրնանք ունենալ լաւագոյն օտար խաղաղո՞ղը:

Միայն երկու հազար իրքանանեան ոսկի վճարելով՝ մենք կրնանք Հ.Մ.Ը.Մ.ի անցեալի փառքը վերակերտել՝ շահելով իրքանանեան ֆուտբոլի ախոյեանութիւնը ուրբերող անգամ ըլլալով:

Միայն երկու հազար իրքանանեան ոսկի վճարելով՝ իրքանանահայրութիւնը ընդհանրապէս եւ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերն ու բազմապար համակիրները, պիտի ապրին հայու յաղթանակի արդար հպարտանքը:

Վ. Թեքեանի բառերով, հայրութեան համար յաղթանակները, հացի եւ ջուրի չափ կարելու են:

Իսկ իրքանանահայրութեան համար, մանաւանդ այս օրերուն, դեռ շատ աւելին է:

ՊԵՏՐՈՍ ՇԵՄՄԵՍԵԱՆ

### ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈԼ

## ԻԺԹԻՄԱՇԻ - Շ.Մ.Ը.Մ.՝ 1 - 5

Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 6րդ հանգրուանի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը, անցեալ Շաբաթ օր 5-1 արդիւնքով ջախջախեց Իժթիմաիի Բրիտիի քաղաքապետարանի դաշտին վրայ՝ այսպիսով արձանագրելով եղանակի իր հինգերորդ յաղթանակը եւ ապահովելով առաւելագոյն 15 կէտերը: Մրցումը նուազ կատարած Հ.Մ.Ը.Մ. այժմ երեք կէտով կը գերապանցէ 2րդ դիրքը գրաւող Հ.Մ.Ս.ը, որ, իր կարգին, յաղթանակ մը արձանագրեց, 6-0 արդիւնքով պզտուելով Շապապ Խիամը: Իր կարգին մրցումը նուազ կատարած Հ.Մ.Ս., սակայն կրած է մէկ պարտութիւն:

Հիւսիս մայրաքաղաքին մէջ տեղի ունեցած մրցումին, թէեւ Իժթիմաի ինք բացաւ մրցումին հաշիւը, սակայն Հ.Մ.Ը.Մ. Ա. կիսախաղը արտուեց 2 - 1 արդիւնքով, շնորհիւ՝ Բաֆֆի Չուլֆայեանի (փենալթիով) եւ Յակոբիկ Տոնապետեանի կողմէ նշանակուած կոլերուն: Բ. կիսախաղին Հ.Մ.Ը.Մ. իր յարձակումները ւաւելի էս սաստկացնելով՝ նշանակեց յաւելեալ երեք կոլեր էս, շնորհիւ՝ Դրո Քէհեանի, Բաֆֆի Չուլֆայեանի եւ Վարդան Լապարեանի:

Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները (որոնք կը գնահատուէին շուրջ 1500 հոգի), բախտը չունեցան իրենց կազմին մարզիկներուն կողմէ մեծ թիւով կոլեր տեսնելու, որովհետեւ մրցակից կազմին բերդապահը հրաշքով իր բերդը փրկեց բազմաթիւ կոլերէ, այլապէս արդիւնքը պիտի ըլլար կրկնապատիկը:



Մրցումէն ետք, առնճը կ'ողջունեն իրենց ընկերակցող համակիրները (Լուսակարք՝ ԺՈՐԺ ԺԱՄԿՈՇԵԱՆԻ)

Ստորեւ՝ 6րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Մաժտալ Ալնճար - Շապապ Թրիփոլի	0 - 1
Շապապ Խիամ - Հ.Մ.Ս.	0 - 6
Ռասիկ - Ռիատա Ուալ Ատապ	1 - 0
Իժթիմաի - Հ.Մ.Ը.Մ.	1 - 5
Նահտա Պար Էլիաս - Մահապպա	2 - 1
Թատամոն Նապաթի - Ահլի Սալտա	1 - 2
Ստորեւ՝ Ա. դասակարգի 7րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.	
Ախա Ալէյ - Պրոթ	0 - 1
Մապարա - Ահտ	0 - 3
Սալամ - Նըժմէ	2 - 3
Սաֆա - Սաժէս	2 - 2
Թատամոն Սուր - Շապապ Սահէլ	2 - 2
Անսար - Օլիմփիք	0 - 2

Ստորեւ՝ Բ. դասակարգի դասաւորումը.

	ՄԻՅ.	ԿԵՏ
1.- Հ.Մ.Ը.Մ.	5	15 (17 - 4)
2.- Հ.Մ.Ս.	5	12 (18 - 5)
3.- Մահապպա	6	10 (13 - 10)
4.- Ռասիկ	6	10 (9 - 6)
5.- Իժթիմաի	6	10 (11 - 10)
6.- Շապապ Թրիփոլի	6	8 (8 - 8)
7.- Թատ. Նապաթի	6	8 (7 - 11)
8.- Ռ. Ուալ Ատապ	5	6 (4 - 3)
9.- Նահտա	5	6 (5 - 9)
10.- Իսլահ	4	5 (5 - 3)
11.- Հըրրիէ	5	3 (3 - 9)
12.- Ահլի Սալտա	5	3 (6 - 11)
13.- Խիամ	6	2 (3 - 24)
14.- Ֆրիան Սալտա	0	0 (0 - 0)

Ստորեւ՝ Ա. դասակարգի դասաւորումը.

	ԿԵՏ
1.- Ահտ	19 (13 - 5)
2.- Նըժմէ	13 (12 - 6)
3.- Թ. Սուր	13 (15 - 10)
4.- Պրոթ	13 (6 - 4)
5.- Սաժէս	11 (10 - 7)
6.- Օլիմփիք	10 (9 - 6)
7.- Անսար	9 (13 - 10)
8.- Սաֆա	6 (9 - 15)
9.- Մապարա	6 (8 - 15)
10.- Սալամ	5 (9 - 15)
11.- Ախա Ալէյ	5 (4 - 10)
12.- Շ. Սահէլ	3 (6 - 14)

### ԱՆԳԼՈՅ ՖՈՒԹՊՈԼ

## ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՌԻՆԱՅԹԸՏ - ԱՐՍԵՆԱԼ՝ 2-0

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 17րդ հանգրուանի մրցումներուն, Մանչեսթըր Երեսուցի իր դաշտին՝ «Օլտ Թրէֆորտ»ի մէջ շատ կարեւոր յաղթանակ մը արձանագրեց, երբ 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց պարագլուխի դիրքը գրաւող Արսենալը:

Մանչեսթըր այժմ միայն երեք կէտով ետ կը մնայ Արսենալէն:

Լիվըրփոլ նահանջեց չորրորդ դիրք, 2-0 արդիւնքով պարտուած հեռանալէ ետք Չարլթընի դաշտէն:

Չելսի բարձրացաւ երկրորդ դիրք, 3-1 արդիւնքով յաղթանակ վերադառնալէ ետք Էվըրթընի դաշտէն: Նիւքեալը 1-0 արդիւնքով յաղթանակ վերադարձաւ Ասթոն Վիլայի դաշտէն, շնորհիւ՝ Էլըն Շիրըրի նշանակած կոլին (82րդ):

Պլեյքըն պարտութեան մը փրկուեցաւ, երբ Պոլթընի դէմ տեղի ունեցած մրցումին (1-1) վերջին վայրկեանին Քրէյկ Շորթը նշանակեց հաւասարութեան կոլը: Տրոյ վայրկեանին ձէյ ձէյ Օքըշա նշանակած էր Պոլթընի կոլը:

ԴԱՍՍԻՈՐՈՒՄ	ԿԵՏ
1.- Արսենալ	35
2.- Չելսի	33
3.- Մանչ. Երեսուցի	32
4.- Լիվըրփոլ	31
5.- Էվըրթըն	29
.....	.....
18.- Պոլթըն	14
19.- Սանտըրլէնտ	14
20.- Ուէսթ Համ	13

### ՊՈՒՆՏԸՍԼԻԿԱ

## ՊԱՅԵՐՆ ՄԻՆՆԻՍ ԿԸ ՍՈՒՐԱՅ

Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Պուրտալիկա) 16րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Պայէրն Միւնխի արձանագրեց եղանակի իր 12րդ յաղթանակը, երբ 3-0 արդիւնքով յաղթանակ վերադարձաւ Շտուտգարթի դաշտէն:

Անոր ետին գտնուող Պորտսիա Տորթմունտ, որ Պայէրնի նման կրած է ցարդ երկու պարտութիւն, իր դաշտին վրայ 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց նախափերջին դիրքը գրաւող Քայզըրսլաութըրընը:

Ստորեւ՝ 16րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.	
Ներթա Պերլինգ - Վոլֆսպուրկ	2-2
Նիւրնպէրկ - Զոթպուս	2-2
1860 Միւնխի - Պայէր Լեյքընուզըն	0-3
Արմինիա Պիլքֆելտ - Հանգա Ռոսթոք	3-0
Շալքէ - Վերտըր Պրեմըն	1-1
Շտուտգարթ - Պայէրն Միւնխի	0-3
Պորտսիա Տորթ. - Զայլըրսլաութըրըն	3-1
Համպուրկ - Պոլսու	1-1
Պ. Մեոնընկլատպախ - Հանովըր 96	1-0

ԴԱՍՍԻՈՐՈՒՄ	ԿԵՏ
1.- Պայէրն Միւնխի	38
2.- Պորտսիա Տորթմունտ	30
3.- Վերտըր Պրեմըն	30
4.- Շալքէ	27
5.- Շտուտգարթ	24
.....	.....
16.- Հանովըր 96	15
17.- Զայլըրսլաութըրըն	10
18.- Զոթպուս	10

### ԲԸՏՈՆՏՕ ՎԵՐԱԴԱՐՁԱԻ ԵՐԿՈՒ ՏԱՐՈՒԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԵՆԷՄ ԵՐ ԵՏԲ

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Քալչիօ) 13րդ հանգրուանի մրցումներուն, հետաքրքրական եղաւ Ա. Սէ. Միլան - Ա. Էս. Ռոմա մրցումին արժանիքն ունեցող միջնապահ Ֆեռնանտո Ռոտոնտոյի վերադարձը, որ աւելի քան երկու տարիէ ի վեր դաշտ չէր ներկայանար իր կազմին՝ Ա. Սէ. Միլանի հետ:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք (1-0) Ա. Սէ. Միլան գրաւեց ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը՝ մէկ կէտով գերապանցելով Լացիօ Ռոման, որ 3-3 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք Ինթեր Միլանի հետ, նահանջեց 2րդ դիրք:

Վտանգաւոր դիրքի վրայ գտնուող Պրեչիա ստեղծեց մեծագոյն անակնկալը, երբ իր դաշտին վրայ 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Եուվեթուսը:

Վերջին դիրքը գրաւող Քոնո, անգամ մը եւս ձախողեցաւ արձանագրել եղանակի իր առաջին յաղթանակը, երբ 1-1 արդիւնքով հաւասարութեամբ հեռացաւ Մոտենալի դաշտէն (8րդ):

### ՊԱՍԵԹՊՈԼ

## ՄԻԶԻԱՐԱ - Հ.Մ.Ը.Մ.՝ 70 - 56

Լիբանանի տղոց պասթեթպոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 3րդ հանգրուանին իր կատարած մրցումին, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբը, կրեց եղանակի իր երրորդ յաջողական պարտութիւնը՝ Շեպիպէ Միպիարայէն, 70 - 56 արդիւնքով: Հակառակ անոր, որ Ա. կիսախաղին կէտերու տարբերութիւնը չորս էր միայն (31 - 27), սակայն չորրորդ քորթըրին անիկա աւելիով շատցաւ (21 - 12):

ԸԼԵՌՆԱԼԻԲԱՆԱՆԻ նահանգէն ներս տեղի ունեցող Լիբանանի տղոց Բ. հանգրուանի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս արձանագրեց իր երկրորդ յաղթանակը, 70 - 66 արդիւնքով պարտութեան մատնելով իր մրցակիցը՝ Շիրաա Պուարը: Ա. կիսախաղին, Հ.Մ.Ը.Մ. 39 - 23 արդիւնքով կը յառաջանար իր մրցակիցին վրայ:

### ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՆ

## ՊԱՐՍԵԼՈՆԱ ԴԱՐՁԵԱԼ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 13րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Ռէալ Մադրիտա, որ ցարդ անպարտելի միակ խումբն է, արձանագրեց եղանակի իր 8րդ յաղթանակը, 1 - 0 արդիւնքով յաղթանակ վերադառնալէ ետք 18րդ դիրքին վրայ գտնուող Սելիլայի դաշտէն:

10րդ դիրքին վրայ գտնուող Պարսելոնա կրեց եղանակի իր 5րդ պարտութիւնը, երբ 1 - 0 արդիւնքով պարտուած հեռացաւ Ռախօ Վալեքանոյի դաշտէն: Նորիսէ Ալբոլթիա նշանակեց մրցումին «որք» կոլը (66րդ):

Վերջին դիրքը գրաւող Ռեքրէաթիօ Հուելվա իր դաշտին վրայ 1 - 1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Տեփոթիօ Քորունայի հետ:

Ուրախ լուր... սակերը նուազեցան

43" PROJECTION TV \$2269 +VAT

այժմ 50" միայն 2999\$ +VAT

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ. Պուրճ Զամուտ - Բաղաբաւտ, հրապարակ ՊԵՌԱՍՅՆ՝ 01-241000

TOSHIBA

ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆ ՀԱՍՏ. - MAISON GABY

Տնային Ելեկտրական Առարկաներ - Home Appliances

Նոր Տարուան Բացառիկ Գիներ - Christmas Offers

Gaz Heater Italy 113000LL	STEREO 197000LL	Microwaves 90000LL / 110000LL
LEIFHEIT 60000LL	DVD-JG 185000LL	Braun Silk-epil 50000LL
BRAUN magimix	Food Processor England 106000LL	Vacuum Cleaner Japan 113000LL
KENWOOD	TEFAL / ASEP	FAGOR
LEIFHEIT		

Պուրճ Զամուտ, մայր պողոտայ, դեղարան Արաքս-ի դիմաց, Գեռ.՝ 01/261630

# ՎՐԱՍՏԱՆ ԶԵՉԷՆ ԶԻՆԵԱԼՆԵՐՈՒ ԴԷՄ ԱՐՇԱԻ ՄԸ ՇՂԹԱՅԱԶԵՐԾԱԾ Է

Վրաստան, որ Մոսկուայի կողմից ճնշումների տակ է իր հողամասերում վրայ ըմբոստներու գործունեությունները վերջ տալու համար, յայտնած է, թե մեծ թիվով չեզնչներն են ձերբակալված է եւ սպանված առնուազն 5 զինվորներ, որոնք կապ ունեցած են Ռուսիոյ մէջ 3 տարի առաջ արձանագրուած մահացու պայթուածներու:

Իր կողմէ հակահարձակական լայնածիր գործողութիւն» համարուած քայլերու ծիրէն ներս, Վրաստան նաեւ Ռուսիոյ յանձնած է մարդ մը, որ, ըստ Մոսկուայի, մաս կը կազմէ չեզնչներու խումբի մը, որ կը կանգնէր 1999ի պայթուածներու ետին, որոնք Ռուսիոյ տարածքին աւելի քան 300 զոհ խած էին:

Շարք օր, անցնող քանի մը տարիներուն Վրաստանի մէջ չեզնչներու դէմ տեղի ունեցած ամէնէն մեծ գործողութեան ընթացքին, իշխա-

նութիւնները տասնեակներով օտարահայտակները հաւաքած են մատնահետքեր առնելու համար: Անոնց կարգին է Վրաստանի մէջ չեզնչներու գլխաւոր ներկայացուցիչն է:

Բեկչական գործողութիւններուն»:

Կրեմլին 1999ի յարձակումները օգտագործած էր արդարացեալու համար 10 տարուան ընթացքին Չեզնչիոյ դէմ զինուորական իր երկրորդ արշաւը:

## ՌՈՒՍԻԱ ԲՐԻՏԱՆԻԱՆ ԿԸ ԲՆԱԿԱՍԷ

Միւս կողմէ, Ռուսիա զայրոյթով հակադարձած է Բրիտանիոյ, որ երաշխաւորագրին փոխարէն ազատ արձակած է Աճմէտ Ջաքաբէր՝ Դանիայէն Լոնտոն հասնելէ ետք:

Ռուսիոյ մէջ առաջարկին ընդառաջելով՝ Բրիտանիոյ ոստիկանութիւնը ձերբակալած էր Ջաքաբէրը Լոնտոնի «Հիթթօ» օդակայանին մէջ:

Սակայն ան աւելի ուշ ազատ արձակուած է: Լոնտոնի մէջ առեանք պիտի որոշէ, թէ ան Մոսկուայի պիտի յանձնուի:

## ԹԵՂՐԱՆԻ ՄԷՉ՝ ԲՈՂՈՔԻ ՅՈՅՅԵՐ

Բիրքերով պինուած ապահովութեան ուժեր աւելի քան վաթսուներորդ դարակալեցին Իրանի մայրաքաղաք Թեհրանի մէջ, ուր իսպարաւոր ցուցարարներ քաղաքական բարեկարգում կը պահանջէին:

Յոյժը, որ տեղի կ'ունենայ ուսանողներու օրուան առիթով, քանի մը շարքէն վեր կապմակերպուած ցոյցերուն կարեւորագոյնը կը նկատուի, որովհետեւ մեծ թիւով ոչ ուսանողներ ուլած են անոր մասնակցի:

Թեհրանի կառավարչին գրասենեակի ապահովութեան եւ քաղաքական հարցերու պատասխանատուն՝ Ալի Թալալաբաժը, որ ձերբակալուած են 60-70 ցուցարարներ, որոնք հարցաքննութեան կ'ենթարկուին: Թալալաբաժը, որ ձերբակալուածները կատարուեցան, որովհետեւ այս անգամ ցոյցը համալսարանի շրջափակէն դուրս էր եւ առանց արտօսագիրի տեղի կ'ունենար: Ան

Ռուսանողական ցոյցերը ծայր տուած էին Նոյեմբերին, իբրեւ հակադարձութիւն այլախի մտաւորական եւ համալսարանական դասախօս Հաշէմ Աղաճարիի դէմ արձակուած մահաւճիռին:

Ռուսանողական ցոյցերը ծայր տուած էին Նոյեմբերին, իբրեւ հակադարձութիւն այլախի մտաւորական եւ համալսարանական դասախօս Հաշէմ Աղաճարիի դէմ արձակուած մահաւճիռին:

Ռուսանողական ցոյցերը ծայր տուած էին Նոյեմբերին, իբրեւ հակադարձութիւն այլախի մտաւորական եւ համալսարանական դասախօս Հաշէմ Աղաճարիի դէմ արձակուած մահաւճիռին:

(ՌՈՅԹԸՐԶ)

## ՏԱՍՆԿԻՆԳ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

Հալ Սաղոյեանի թեկնածութիւնը: Հայաստանի ընտրական օրէնագիրքին համաձայն, առաջադրման ժամկետին աւարտէն ետք հինգ օրուան ընթացքին Հայաստանի Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը իրաքանչիւր թեկնածուի լիազօր ներկայացուցիչներուն կը յանձնէ 80 պաշտօնաթերթիկ: Թեկնածուն առաջադրուած կը նկատուի, եթէ առնուազն 35 հազար քաղաքացի պաշտպանէ տուեալ թեկնածուին առաջադրումը ստորագրելով պաշտօնաթերթիկը: Ստորագրութիւններու հաւաքման ժամկետը կը սկսի Դեկտեմբեր 11ին եւ կը տեւէ մինչեւ Դեկտեմբեր 31:

**galerie PIERROT**  
Specialiste de Meubles D'enfants de 0 à 20 ans

Pour ses enfants on rêve toujours de ce qu'on n'a pas eu  
**PIERROT**  
réalisera tous vos rêves.

Autostrade Jal-el-Dib - Tel : 04 / 713233 - 03 / 701607

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆՍԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**Ճակերոյթ Պարահանդէս**

Կիրակի, 5 Յունուար 2003  
Երեկոյեան ժամը 9:30:Աճ սկսեալ  
**PHOENICIA** դանդոկին մէջ

**Երգահանդէս**  
Երկուաքի, 6 Յունուար 2003,  
Երեկոյեան ժամը 7:30:Աճ սկսեալ,  
**UNESCO-ի արահին մէջ**

Տոմսերը կարելի է ստանալ հետեւեալ կեդրոններէն - Obelix գրախանութ, Աճիկիսա Աղբալեան մարզամշակութային կեդրոն, Արզիկ - Յամազգային գրախանութ, Շաղոյեան կեդրոն, Պուրճ Գամուտ - Տիւրքիստ, Պուրճ Գամուտ - Սթիւտիո Վաշ, Երկաթ կամուրջի մօտ, Գամուտ - Յամազգային «Կոմիտաս», գրախանութ, Չորաք էլ Պլաք - Յամազգային Լեւոն Շանք Կեդրոն, Պուրճ Գամուտ

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՔՈՓԵՆՀԱԿԸՆԻ ...

Շարունակուած Ա. Էջէն

Պարիսի վարչապետ Էտմունտ Շթոյալը, որ Սեպտեմբերի երեսփոխանական ընտրութիւններուն փոքր համեմատութեամբ պարտուած էր կեդրոնի ձախ Օրէտօրի կողմէ, յայտարարած է, որ Թուրքիոյ անդամակցութիւնը վերջ պիտի տայ Եւրոպայի քաղաքականութեան միացնելու քայլերուն, որովհետեւ անհիշ համարկով կարողակազմութիւնը անհրաժեշտ սահմաններէն անդին պիտի տան:

## ՍՄԱՍ «ՔԱՅԻՏԱ»Ի ԿԵՂՈՑ ԿԵԴՐՈՆՆԵՐ ԸԱՍՏԱՏԱԾ Է ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՄԷՉ

Պաղեստինեան իշխանութիւնը ամբաստանեց իսրայէլեան Մոսատ գաղտնի սպասարկութիւնը՝ դիտել տալով, որ անհիշ «Քայիտա»ի կեդր կեդրոններ հաստատուած է Կապալի մէջ, որպէսզի վարչապետ Արիէլ Շարոն արդարացեալ նպատակները շրջաններուն դէմ յարձակումները: Շարոնի բանքեր Ռասան Կիսին «անհիշատակ» որակեց պաղեստինեան ամբաստանութիւնը:

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաթ Արաֆատ Ռամալլայի իր կեդրոնատեղիէն յայտարարեց, որ Շարոն մեծ սուտ մը խօսած է: Արաֆատ ըստ, որ Շարոն այս միջոցը պիտի օգտագործէ արդարացեալու համար պաղեստինեան շրջաններուն դէմ յարձակումները: Պաղեստինեան իշխանութեան տեղեկատուութեան նախարար Եսաթ Ալտ Ռապալոն խօսեց, որ Իսրայէլ նոր դաւ մը կը հիւսէ Կապալի եւ Կարիսի միջև: Ենթադրեալ դաւին մանրամասնութիւնները Շարաթ օր օտար դիւանագետներու փոխանցեց կառավարութեան այլ անդամ մը՝ Նապիլ Շարաթ: Ան ըստ, որ Մոսատի թելադրանքով ու ցուցմունքներով քանի մը հոգի «Քայիտա»ի անունով բռնի մը հաստատուած են Կապալի մէջ: Ալտ Ռապալոն Շարաթ շեշտեցին, որ Իսրայէլի նպատակն է օգտագործել այս պատրուակը նոր գործողութիւններու ձեռնարկելու համար պաղեստինեան շրջաններուն դէմ:

Պաղեստինեան պաշտպանութեան մարզի պատասխանատու մը սակայն դիտել տուաւ, որ Իսրայէլի նպատակն է խաբել մարդիկ՝ պատնք համոզելով, որ «Քայիտա»ի համար կ'աշխատին: Այսպիսով՝ անհիշ իր հսկողութեան ու հակակշիռի տակ առած կ'ըլլայ պատնք: Ռաշիտ Ալտ Շարաթ տուաւ օրինակը միջադէպի մը, ուր Իսրայէլ յաջողած է սպաննել ծայրայեղական պատասխանատու մը, զոր խաբելով առաջնորդած էր վայր մը, ուր ենթադրաբար պիտի սպաննէին «Քայիտա»ի հետեւորդներ, որոնք վէճը պիտի տային պատասխանատուին:

Շարոն կ'ուզէ կապ մը գտնել պաղեստինցիներուն եւ «Քայիտա»ի միջեւ՝ նոր հանգրուան մը բանալով պաղեստինեան ծայրայեղական

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաթ Արաֆատ Ռամալլայի իր կեդրոնատեղիէն յայտարարեց, որ Շարոն մեծ սուտ մը խօսած է: Արաֆատ ըստ, որ Շարոն այս միջոցը պիտի օգտագործէ արդարացեալու համար պաղեստինեան շրջաններուն դէմ յարձակումները: Պաղեստինեան իշխանութեան տեղեկատուութեան նախարար Եսաթ Ալտ Ռապալոն խօսեց, որ Իսրայէլ նոր դաւ մը կը հիւսէ Կապալի եւ Կարիսի միջև: Ենթադրեալ դաւին մանրամասնութիւնները Շարաթ օր օտար դիւանագետներու փոխանցեց կառավարութեան այլ անդամ մը՝ Նապիլ Շարաթ: Ան ըստ, որ Մոսատի թելադրանքով ու ցուցմունքներով քանի մը հոգի «Քայիտա»ի անունով բռնի մը հաստատուած են Կապալի մէջ: Ալտ Ռապալոն Շարաթ շեշտեցին, որ Իսրայէլի նպատակն է օգտագործել այս պատրուակը նոր գործողութիւններու ձեռնարկելու համար պաղեստինեան շրջաններուն դէմ:

Պաղեստինեան պաշտպանութեան մարզի պատասխանատու մը սակայն դիտել տուաւ, որ Իսրայէլի նպատակն է խաբել մարդիկ՝ պատնք համոզելով, որ «Քայիտա»ի համար կ'աշխատին: Այսպիսով՝ անհիշ իր հսկողութեան ու հակակշիռի տակ առած կ'ըլլայ պատնք: Ռաշիտ Ալտ Շարաթ տուաւ օրինակը միջադէպի մը, ուր Իսրայէլ յաջողած է սպաննել ծայրայեղական պատասխանատու մը, զոր խաբելով առաջնորդած էր վայր մը, ուր ենթադրաբար պիտի սպաննէին «Քայիտա»ի հետեւորդներ, որոնք վէճը պիտի տային պատասխանատուին:

Շարոն կ'ուզէ կապ մը գտնել պաղեստինցիներուն եւ «Քայիտա»ի միջեւ՝ նոր հանգրուան մը բանալով պաղեստինեան ծայրայեղական

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաթ Արաֆատ Ռամալլայի իր կեդրոնատեղիէն յայտարարեց, որ Շարոն մեծ սուտ մը խօսած է: Արաֆատ ըստ, որ Շարոն այս միջոցը պիտի օգտագործէ արդարացեալու համար պաղեստինեան շրջաններուն դէմ յարձակումները: Պաղեստինեան իշխանութեան տեղեկատուութեան նախարար Եսաթ Ալտ Ռապալոն խօսեց, որ Իսրայէլ նոր դաւ մը կը հիւսէ Կապալի եւ Կարիսի միջև: Ենթադրեալ դաւին մանրամասնութիւնները Շարաթ օր օտար դիւանագետներու փոխանցեց կառավարութեան այլ անդամ մը՝ Նապիլ Շարաթ: Ան ըստ, որ Մոսատի թելադրանքով ու ցուցմունքներով քանի մը հոգի «Քայիտա»ի անունով բռնի մը հաստատուած են Կապալի մէջ: Ալտ Ռապալոն Շարաթ շեշտեցին, որ Իսրայէլի նպատակն է օգտագործել այս պատրուակը նոր գործողութիւններու ձեռնարկելու համար պաղեստինեան շրջաններուն դէմ:

Պաղեստինեան պաշտպանութեան մարզի պատասխանատու մը սակայն դիտել տուաւ, որ Իսրայէլի նպատակն է խաբել մարդիկ՝ պատնք համոզելով, որ «Քայիտա»ի համար կ'աշխատին: Այսպիսով՝ անհիշ իր հսկողութեան ու հակակշիռի տակ առած կ'ըլլայ պատնք: Ռաշիտ Ալտ Շարաթ տուաւ օրինակը միջադէպի մը, ուր Իսրայէլ յաջողած է սպաննել ծայրայեղական պատասխանատու մը, զոր խաբելով առաջնորդած էր վայր մը, ուր ենթադրաբար պիտի սպաննէին «Քայիտա»ի հետեւորդներ, որոնք վէճը պիտի տային պատասխանատուին:

Պաղեստինեան պաշտպանութեան մարզի պատասխանատու մը սակայն դիտել տուաւ, որ Իսրայէլի նպատակն է խաբել մարդիկ՝ պատնք համոզելով, որ «Քայիտա»ի համար կ'աշխատին: Այսպիսով՝ անհիշ իր հսկողութեան ու հակակշիռի տակ առած կ'ըլլայ պատնք: Ռաշիտ Ալտ Շարաթ տուաւ օրինակը միջադէպի մը, ուր Իսրայէլ յաջողած է սպաննել ծայրայեղական պատասխանատու մը, զոր խաբելով առաջնորդած էր վայր մը, ուր ենթադրաբար պիտի սպաննէին «Քայիտա»ի հետեւորդներ, որոնք վէճը պիտի տային պատասխանատուին: